«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԽՄ-600-05.05.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) արդեն իսկ նախատեսված են սահմանափակումներ, որոնք վերաբերում են արտակարգ դրության ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեությանը:

Մասնավորապես՝ որոշման հավելվածի 15.1-ին կետում սահմանվում է, որ արտակարգ դրության ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության համար սահմանափակվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի հիմքով կայացված վարչական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից կայացված վարչական ակտերի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումով 2020 թվականի ապրիլի 14-ից հետո հարուցված կատարողական վարույթներով պարտապանի գույքի վրա արգելանք դնելու լիազորությունը: Սույն ենթակետով սահմանված հիմքերով չկիրառված արգելանքները ենթակա են կիրառման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով՝ արտակարգ դրությունը դադարելուց հետո: Իսկ նույն կետի 2-րդ ենթակետով սահմանափակվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ կորոնավիրուսի հետևանքների չեզոքացման միջոցառումների շրջանակներում 2020 թվականի մարտի 16-ից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց որպես աջակցություն տրամադրված դրամական միջոցների վրա արգելանք դնելու և բռնագանձում կատարելու լիազորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վերոհիշյալ որոշմամբ մասամբ կարգավորված են նախագծով առաջարկվող լուծումները, հետևաբար, այս առումով նախագծով նախատեսված կարգավորումների անհրաժեշտությունը բացակայում է:

Մյուս կողմից, անդրադառնալով կատարողական վարույթի էությանը և նրա մասնակիցների շահերի հարաբերակցությանը, պետք է նշել հետևյալը.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է հստակ նախադեպային իրավունք՝ իր մի շարք վճիռներում արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ պահանջի իրավունքը, եթե այն բավականաչափ հիմնավորված է կատարելի լինելու համար, առավել ևս, եթե բխում է դատական ակտից, համարվում է սեփականություն և դրանով իսկ ենթակա է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի Առաջին արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության իրավունք) պաշտպանությանը (տես, մասնավորապես, STRAN GREEK REFINERIES AND STRATIS ANDREADIS v. GREECE գործով (N 13427/87) 09.12.1994 թ. վճռի 59 կետը, VASILOPOULOU v. GREECE գործով (N 47541/99) 21.03.2002 թ. վճռի 22 կետը, BURDOV v. RUSSIA գործով (N 59498/00) 07.05.2002 թ. վճռի 40 կետը, TIMOFEYEV v. RUSSIA գործով (N 58263/00) 23.10.2003 թ. վճռի 45 կետը, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով (N 33509/04) 15.01.2009 թ. վճռի 87 կետը):

Իր հերթին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, անդրադառնալով սնանկության վարույթում պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռության հարցին, 30.01.2013 թվականի թիվ ՍԴՈ-1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը պայմանավորում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու առաջնահերթ անհրաժեշտությամբ: Դրանք են՝ շրջակա միջավայրը, այլ անձանց, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ:

Վերոգրյալից բխում է, որ կատարողական վարույթում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց առաջ պետք է հավասարակշռել մի կողմից պարտապանի, մյուս կողմից պարտատիրոջ շահերը: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ պարտապանը գործել է անբարեխիղճ, ինչի արդյունքում էլ պարտատիրոջ պահանջն արդեն իսկ կատարվում է հարկադիր կարգով: Հաշվի առնելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 53-րդ հոդվածի կարգավորումները՝ պետք է նշել, որ բոլոր դեպքերում առաջին հերթին բռնագանձման ենթակա են պարտապանի դրամական միջոցները: Նշված մոտեցումը տրամաբանական է և արդարացված, քանի որ պարտատիրոջ պահանջը ևս դրամական պահանջ է: Ուստի այն դեպքում, երբ պարտապանն ունի բավարար դրամական միջոցներ, ապա արդարացված չի

լինի այդ պահանջի բավարարման համար արգելադրել և իրացնել պարտապանին պատկանող այլ՝ շարժական կամ անշարժ գույք: Ավելին, այլ գույքի հայտնաբերումը և դրա հաշվին պարտատիրոջ պահանջի բավարարումը ենթադրում է լրացուցիչ ռեսուրսների կիրառում ևս: Մյուս կողմից, օրենքի այլ դրույթներ, օրինակ՝ 58-րդ հոդվածը, առանձին երաշխիքներ է նախատեսում դրամական միջոցների առանձին տեսակների նկատմամբ արգելանքները ոչ ամբողջ չափով կիրառելով:

Ինչ վերաբերում է որոշակի դրամական գումարի չափով պայմանավորված արգելանքներ չկիրառելուն՝ այս մասով հատկանշական է Դատական կատարողների միջազգային միության (այսուհետ՝ միություն) դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ: Մասնավորապես, միությունը հայտնել է, որ վարակը և դրա հետևանքներն ամբողջ աշխարհում տնտեսական զգալի կորուստներ կբերեն՝ սնանկություններ, գործազրկություն և անվճարունակություն: Երկրները քայլեր են ձեռնարկում իրենց քաղաքացիների տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ: Սակայն միության պնդմամբ՝ դա չի կարող նշանակել, որ վարակի պատճառով առաջացած ճգնաժամի ընթացքում օրենսդրական միջոցները պետք է կենտրոնանան միայն պարտապանների շահերի վրա՝ անկախ նրանց ֆինանսական վիճակից: Կատարողական վարույթում որպես պարտատեր սովորաբար հանդես են գալիս փոքր և միջին ձեռնարկությունները: Այսինքն՝ դրանց կասեցումները կամ հետաձգումները կբերեն դրամական միջոցների հոսքի լուրջ խնդիրներ, որոնք էապես կազդեն տնտեսական համակարգի և շուկայի կառուցվածքի վրա: Միության պնդմամբ՝ ներդրողները ևս կկորցնեն վստահությունն իրավական համակարգի նկատմամբ: Կոռուպցիոն դեպքերը ևս հնարավոր չէ բացառել: Կատարողական ընթացակարգերի իրականացումը պետք է մնա համաչափ: Դրանք պետք է հնարավորություն ընձեռեն երաշխավորել պարտատիրոջ պահանջի կատարումը՝ միաժամանակ պաշտպանելով պարտապանի հիմնական իրավունքները: Սոցիալ-տնտեսական իրավունքները ենթադրում են պետության պարտավորությունը երաշխավորելու, հարգելու և պաշտպանելու բոլոր շահագրգիռ անձանց իրավունքները:

Միությունը նշել է, որ թեև դատական ակտի կատարումն արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերից է, սակայն այն չի կարող համարվել պարտադիր: ՄԻԵԴ-ը իր որոշումներից մեկում նշել է, որ պետություններին հնարավոր չէ պարտավորեցնել կատարել օրինական ուժի մեջ մտած բոլոր դատական ակտերը (C. M. v. Belgium, 13 March 2018, App. no.67957/12): ՄԻԵԴ-ը նշել է, որ դատական ակտի կատարման ձգձգումը կարող է

արդարացված համարվել բացառապես հատուկ հանգամանքների առկայության դեպքում (7 May 2002, Burdov v. Russia, Appl. No. 59498/00, §35):

Միությունը հանգել է այն եզրակացության, որ դատական ակտի կատարման հետաձգումը հնարավոր է միայն այն պայմանով, որ այն ժամանակավոր և պատշաճ կերպով հիմնավորված լինի՝ խստորեն անհրաժեշտ լուծում գտնել վարակի տարածման դեմ պայքարում: Միությունը գտել է, որ հետագա երկարացումը մարտահրավեր կլիներ պարտատերերի և պարտապանների իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռության համար: Բացի աղետալի, նյութական և ֆինանսական հետևանքներից, որոնք աստիճանաբար կանդրադառնան տնտեսության բոլոր ոլորտների վրա, շահագրգիռ պետությունը, անկասկած, ենթարկվելու է ՄԻԵԴ-ի կողմից հնարավոր պատժամիջոցների կիրառման՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման համար՝ դատարանի որոշումների կատարման իրավունքի բուն էությունից անհամաչափ հեռանալու պատճառով:

Ելնելով վերոհիշյալից գտնում ենք, որ պարտապանի գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանքներ կիրառելիս պետք է ընտրել այնպիսի մեխանիզմ, որ հավասարակշռի իրավահարաբերության երկու կողմերի շահերը և հաշվի առնվի բարեխղճության սկզբունքը և եթե անգամ դիտարկվի արգելանքներ չկիրառելու տարբերակը, այդ դեպքում պետք է սահմանափակվել որոշակի սուբյեկտային կազմով (արտակարգ դրության հետևանքով, այդ թվում՝ դրա հետևանքով չկատարված պարտավորությունների արդյունքում տուժած անձինք, տնտեսվարողներ, արտակարգ դրության ընթացքում կատարված իրավախախտումներով կայացված ակտերով հարուցված վարույթներ), ինչպես նաև այդպիսի արտոնություն կիրառելու համար սահմանել հստակ ժամանակահատված:

Ամփոփելով վերոգրյալը՝ նախագծով առաջարկվող կարգավորումը համարում ենք խնդրահարույց պարտատերերի իրավունքների պաշտպանությունն ապահովելու պետության պոզիտիվ պարտականության իրացման տեսանկյունից: Առաջարկվող կարգավորման արդյունքում խախտվում է պարտապանների և պարտատերերի շահերի հավասարակշռությունը, պարտատերերի պահանջները ստորադասվում են պարտապանների շահերի նկատմամբ: Նախագծով անտեսվում է նաև այն հանգամանքը, որ կատարողական վարույթների ժամանակ բանկային կամ ավանդային հաշվում առկա դրամական միջոցների վրա արգելանք կարող է դրվել նաև ալիմենտ բռնագանձելու, առողջությանը, ինչպես նաև կերակրողի մահվամբ, հանցագործությամբ պատճառված վնասները հատուցելու համար և այդ բռնագանձված դրամական միջոցները նույնպես կարող են հանդիսանալ արտակարգ

դրության ընթացքում ֆիզիկական անձանց առաջնային պահանջմունքները բավարարելու միակ հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ: